

Սանթրյան Վ. - Անկախությունը մեզ համար աստվածային շնորհ էր - թերթ,
«Հայաստանի Հանրապետություն», Ե., 17.09.2016

Առօրյա պատմություններ նորանկախ Հայաստանի մասին, որ դառնում է 25 տարեկան
(Հատված հոդվածից)

«Ռազմի դաշտը ամենուր է ռազմի դաշտ»

Մեր այսօրվա զրուցակիցը Երեւանի Գեղարվեստի պետական ակադեմիայի
նեկտոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, գեղանկարիչ Արամ Իսաբեկյանն է:

–Ցանկացած ազգի ներկայացուցիչ կերպեր, որ պետություն ունենար: Մեր այս
տարածաշրջանի վրայով ազգեր են անցել, պետություններ են անցել ու ժողովուրդներ:
Անցել են, չկան: Հայաստանն այսօր կա: Կա ու պիտի հարատևի:

Այն անկախությունը, որ այսօր մենք ունենք, սա երեւի ամբողջ աշխարհով մեկ
սփռված մեր հայության համար (իսկ մենք գիտենք, թե ինչու է աշխարհով մեկ սփռվել)
թիվ մեկ երազանքը, ցանկությունը Հայաստանի Հանրապետություն գոյությունն է, մեր
անկախ, գեղեցիկ, սիրուն երկիրը:

Ես չեմ սիրում, երբ ասում են՝ փոքր երկիր: Փոքր երկիր չկա: Ցանկացած երկիր
կարող է իր չափից անկախ հզոր լինել եւ այդ հզորությունն առաջին հերթին կախված
լինի իր բնակիչներից: Եթե այդ բնակիչները սիրեն իրենց երկիրը, ուրեմն, լավ կսովորեն,
լավ ընտանիքներ կկազմեմն, լավ բանակ կունենան, արդարություն կլինի, աշխատանք
կլինի: Հայաստանի համար այնքան էլ մեծ դժվարություն չկա, որ բարգավաճող երկիր
լինի: Ես կարծում եմ, որ մենք դա մի օր կտեսնենք, որ մենք կունենանք բարգավաճ
Հայաստան:

Զարմանալի թող չթվա, որ նույնիսկ խորհրդային շրջանում մեր Գեղարվեստի
ակադեմիան նկատելի զարգացում գրեթե չունեցավ: Ընդհակառակը, բազում խնդիրներ
ունեք (էն ժամանակ գեղարվեստաթատերական ինստիտուտ էր կոչվում), որոնք, չգիտես
ինչու, չէին լուծվում: Այն, ինչ որ այսօր ունի մեր ակադեմիան, նրա բոլոր հիմնական
զարգացումները ընթացել են մեր անկախության շրջանում: Այս տարիներին մենք եւ
որակական առաջընթաց ունեցանք, եւ քանակական, եւ տնտեսական՝ բոլոր
առումներով, եւ ես համոզված եմ, որ մեր ակադեմիային շատ լավ ապագա է սպասում,
որ այն լինելու է որպես տարածաշրջանի լավագույն մասնագիտական բուհը:

Բոլորս պիտի աշխատենք, բոլորս պիտի մեր ուժերի ներածին չափով մեր տեղում
լինենք, փայփայենք մեր անկախությունը, միշտ զգոն լինենք, քանի որ ռազմի դաշտը
ամենուր է ռազմի դաշտ:

Միշտ զգոն, միշտ ուշադիր պահպանենք մեր անկախությունը...

http://www.hypress.am/index.php?sub=hodv&hodv=20160917_1&flag=am